ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/105 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մարզագույքի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացումը տեղի ունեցավ 11.10.2022թ. ժամը 12:30-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան

Հանձնաժողովի անդամ՝ Դավիթ Բաղումյան
Հարություն Եղոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Սպորտ Ինսայթ» ՍՊԸ
2	«Լայթսպորտ» ՍՊԸ
3	«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ
4	«Ա-Պրոգրես» ՍՊԸ
5	«Սիթի Սպորտ» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները									
		«Սպորտ Ինսայթ» ՍՊԸ		«Լայթսպորտ» ՍՊԸ		«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ		«Ա-Պրոգրես» ՍՊԸ		«Սիթի Սպորտ» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ									
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	24000000	18000000	18000000	18250000	21900000	31920839	38305006.80	-	-	-	

2	24998001	19788000	19788000	17500000	21000000	31920839	38305006.80	-	-		
3	19156500	17617500	17617500	-	-	31920839	38305006.80	-	-	17100000	17100000
4	1742400	1672080	1672080	-	-	31920839	38305006.80	1417000	1417000	1531500	1531500

4. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

4.1 «Սպորտ Ինսայթ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ 1-ին, «Լայթսպորտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ 2-րդ, «Ա-Պրոգրես» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ 4-րդ և «Սիթի Սպորտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ 3-րդ չափաբաժինների մասով կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.2 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո՝ 2022թ հոկտեմբերի 12-ին, ժամը 12:15-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 12.10.2022թ ժամը 12:15-ին

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 2-րդ չափաբաժնի մասով «Լայթսպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.2 1-ին չափաբաժնի մասով «Սպորտ Ինսայթ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում /Հավելված 1.2/ 4.8 ենթաբաժինը լրացված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.3 3-րդ չափաբաժնի մասով «Սիթի Սպորտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում /Հավելված 1.2/ 4.5 ենթաբաժինը լրացված չէ,
- առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում անհրաժեշտ է ներկայացնել մատակարարվելիք ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ բացառելով համարժեք ապրանքանիշերի ներկայացումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.4 4-րդ չափաբաժնի մասով «Ա-Պրոգրես» ՍՊԸ-ի ներկայացված հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում /Հավելված 1.2/ 4.5 ենթաբաժինը թերի է լրացված, իսկ 4.7.3 կետը լրացված չէ,

- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում անհրաժեշտ է ներկայացնել մատակարարվելիք ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ բացառելով համարժեք ապրանքանիշերի ներկայացումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.5 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Սպորտ Ինսայթ» ՍՊԸ-ին, «Սիթի Սպորտ» ՍՊԸ-ին և «Ա-Պրոգրես» ՍՊԸ-ին շտկել 5.2- 5.4 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.6 Հանձնաժողովի նիստը շարունակել մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 17.10.2022թ., ժամը 12:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 17.10.2022թ ժամը 12:30-ին

6. Արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 «Սպորտ Ինսայթ» ՍՊԸ-ի, «Սիթի Սպորտ» ՍՊԸ-ի և «Ա-Պրոգրես» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են 5.2-5.4 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից՝

1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Սպորտ Ինսայթ» ՍՊԸ-ին,

2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Լայթսպորտ» ՍՊԸ-ին,

3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Սիթի Սպորտ» ՍՊԸ-ին,

4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Ա-Պրոգրես» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել՝

«Սպորտ Ինսայթ» ՍՊԸ-ի հայտը՝ 2-4-րդ չափաբաժինների մասով, «Լայթսպորտ» ՍՊԸ –ի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով և «Սիթի Սպորտ» ՍՊԸ-ի հայտը՝ 4-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.3 Հակադարձ աճուրդի արդյունքում «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի հայտը 1-4-րդ չափաբաժինների մասով համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին

8.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Կարեն Գիլոյան /նախագահ/

_____ Դավիթ Բաղումյան

_____ Հարություն Եղոյան

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/